ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____ի 2026 թվականի №__-Ա

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Համակարգի օպերատոր) 2026 թվականի ապրիլի 6-ի №Ե/1/270-26 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) փոխվարչապետի մոտ 2026 թվականի ապրիլի 2-ին շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կայացած խորհրդակցության ընթացքում հնչեցված կանխատեսվող զարգացումների հաշվառմամբ՝ ՀՀ և Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) միջև միջպետական էլեկտրահաղորդման գծերի հնարավոր վթարային անջատման հետևանքով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի լրիվ կամ մասնակի մարման հավանականությունը նվազագույնի հասցնելու նպատակով նպատակահարմար է համարել հնարավորինս բալանսավորել ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգը «գազ-էլեկտրական էներգիայի դիմաց» գործարքի շրջանակում սահմանափակելով էլեկտրական էներգիայի հոսքը դեպի ԻԻՀ 150 ՄՎտ հզորության չափով,

բ) Հանձնաժողովը 2026 թվականի ապրիլի 13-ի №ՄՄ/34.3-Մ2-3/1990-2026 գրությամբ հայտնել է, որ ՀՀ փոխվարչապետի մոտ 2026 թվականի ապրիլի 2-ին կայացած խորհրդակցության ընթացքում հստակ տեղեկատվություն չի եղել ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի վթարային անջատման մասին և որևէ հանձնարարական չի տրվել նշված գործոնով պայմանավորված նախապես ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների փոփոխությունների մասին, այլ ընդամենը քննարկվել է ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի անջատում տեղի ունենալու դեպքում ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող հնարավոր հետևանքները և տվյալ պարագայում իրականացվելիք գործողությունները, ինչպես նաև նշվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների փոփոխությունների հետևանքով

համակարգում հնարավոր լրացուցիչ ծախսերի առաջացման հիմքերի ուսումնասիրության հարցում Հանձնաժողովի հետևողական լինելու մասին,

գ) Հանձաժողովը ՀՀ փոխվարչապետի մոտ կայացած խորհրդակցության օրվանից՝ 2026 թվականի ապրիլի 2-ից մինչև համակարգում հնարավոր լրացուցիչ ծախսերի առաջացման հիմքերի ուսումնասիրության հարցում հետևողական լինելու մասին իր գրությունն ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ օրը՝ 2026 թվականի ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածի համար իրականացրել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների վերը նշված փոփոխությունների հետևանքով համակարգում առաջացած լրացուցիչ ծախսերի վերլուծություն և հաշվարկներ: Այդ նպատակով դիտարկվել են «Էներգետիկայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրողներին (այսուհետ՝ ՎԷԱ կայան) և միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակում գործող արտադրողին (այսուհետ՝ Միադրույք սակագնով ՊԷԱ կայան) բեռնաթափման ծառայություն մատուցելու նպատակով Համակարգի օպերատորի կողմից տրված կարգավարման կարգադրության ժամերը, առաքման թույլատրված հզորության մեծությունները, այդ ժամերին դեպի ԻԻՀ էլեկտրական էներգիայի արտահանման քանակները, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԵրՋԷԿ) և «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԱՐՄՓԱՈՒԵՐ) ջերմային կայաններից առաքված էլեկտրական էներգիայի քանակները,

դ) Հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 8-ի №ՄՄ/34.3-Ղ4-1/2433-2026 գրությամբ Համակարգի օպերատորին է ներկայացրել ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների փոփոխությունների հետևանքով համակարգում առաջացած լրացուցիչ ծախսերի վերլուծության արդյունքները և, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ 2026 թվականի մայիսի 8-ից Համակարգի օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Համակարգի օպերատորի կողմից ՎԷԱ կայանների և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանի կարգավարումը (այդ թվում՝ բեռնաթափումը) Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) և 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №522-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման

ցանցային կանոնների (այսուհետ՝ ԷՀՑ կանոններ) պահանջների հնարավոր խախտմամբ իրականացված լինելու փաստի ուսումնասիրման նպատակով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Համակարգի օպերատորը 2026 թվականի մայիսի 18-ի №Ե/1419-26 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ մասնավորապես նշելով, որ՝

- ԻԻՀ էլեկտրաէներգետիկական համակարգում հնարավոր վթարային իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության համար հիմք է հանդիսացել ոչ միայն ՀՀ փոխվարչապետի մոտ 2026 թվականի ապրիլի 2-ին կայացած խորհրդակցությունը, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի պաշտոնական հայտարարությունը և ընդհանուր աշխարհաքաղաքական իրավիճակը, որի պայմաններում նույնիսկ ռիսկի նվազագույն հավանականության դեպքում Համակարգի օպերատորը պարտավոր է ձեռնարկել լրացուցիչ կանխարգելիչ միջոցառումներ՝ համակարգի անվտանգությունն ու հուսալիությունն ապահովելու նպատակով,
- 2026 թվականի մայիսի 4-ին ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած վթարային իրավիճակի առաջացման պատճառներն անմիջականորեն կապված էին ԻԻՀ էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած վթարների հետ, որի հաղթահարմանն էականորեն նպաստել է արևային էլեկտրակայանների արտադրությունը նախապես ԷՀՑ կանոններով սահմանված թույլատրելի առավելագույն ծավալների շրջանակներում սահմանափակված լինելու հանգամանքը,
- վթարային իրավիճակների վերաբերյալ նախապես հստակ տեղեկատվության առկայությունը գործնականում հնարավոր չէ և Համակարգի օպերատորը պարտավոր է մշտապես պատրաստ լինել հնարավոր ռիսկերի առաջացմանը, կիրառել կանխարգելիչ ու լրացուցիչ նախազգուշական միջոցառումներ՝ հատկապես աշխարհաքաղաքական և պատերազմական լարված իրավիճակներում, երբ համակարգային վթարների առաջացման հավանականությունն էականորեն բարձրանում է,
- համաձայն ԷՀՑ կանոնների 92-րդ կետի, 157-րդ կետի 3-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ ենթակետերի՝ Համակարգի օպերատորը կարգավարական կարգադրություն տալիս հաշվի է առնում հաշվեկշռման նպատակով անհրաժեշտ պահուստների առկայությունը, սպառողների համար էլեկտրական էներգիայի մատակարարման հուսալիությունը և որակն ապահովելու համար անհրաժեշտ հզորությունների

առկայությունը զուգահեռ աշխատանքի ժամանակ և սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների հնարավոր ռիսկերը, էլեկտրական էներգիայի հաղորդման ցանցին միացված կայանների կամ հաղորդման ցանցի ենթակայանների ձողերի լարման գրաֆիկների փոփոխման անհրաժեշտությունը՝ ռեակտիվ հզորության պահուստը ապահովելու նպատակով,

- համաձայն ԷՀՑ կանոնների 94-րդ կետի 7-րդ ենթակետի՝ Համակարգի օպերատորը հաշվի է առնում նաև տեղեկատվություն այնպիսի իրադարձությունների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության մակարդակի վրա, որպիսին հանդիսանում էր նաև ստեղծված աշխարհաքաղաքական լարված իրավիճակը,
- Հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 8-ի №ՄՄ/34.3-Ղ4-1/2433-2026 գրությամբ ներկայացված հաշվարկներում արևային էլեկտրակայանների հնարավոր չբեռնաթափման համար հիմք է ընդունվել կայանների դրվածքային հզորությունները, որը չի համապատասխանում ԷՄՇ կանոնների 117.1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվարկման մեթոդին,
- 2026 թվականի ապրիլի 8-ին, 9-ին և 11-ին գիշերային ժամերին արտահանման փոքր ծավալները ու ջերմային էլեկտրակայանների բեռնաթափումը պայմանավորված է ԻԻՀ-ի հետ գործող «գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» գործարքի շրջանակներում գիշերային ժամերին արտահանվող էլեկտրաէներգիայի դիմաց կիրառվող նվազագույն գործակցով,
- Համակարգի օպերատորը գործել է իր լիազորությունների և գործող կանոնների պահանջների շրջանակներում՝ ապահովելու էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության սահմանված ցուցանիշները, և ստեղծված ռիսկային իրավիճակում իրականացրել է այդ ուղղությամբ անհրաժեշտ բոլոր օպերատիվ ու կարգավարական միջոցառումները,

զ) ԷՀՑ կանոնների 82-րդ կետի համաձայն՝ Համակարգի օպերատորը էլեկտրական էներգիայի տարեկան արտադրության կանխատեսվող կառուցվածքը (այսուհետ՝ ԷԱՐԿ) կազմում է ԷՀՑ կանոնների 80-րդ կետի համաձայն համակարգային նշանակության կայանների կողմից ներկայացված տվյալների հիման վրա **ներքին շուկայի պահանջարկը նվազագույն ծախսերով ապահովելու նպատակով**՝ հաշվի առնելով նաև ԷՀՑ կանոնների 82-րդ կետի 1-7-րդ ենթակետերով նշված տվյալները և պայմանները,

է) ԷՀՑ կանոնների 84-րդ կետի համաձայն՝ Համակարգի օպերատորը տարեկան ԷԱՐԿ-ը կազմելիս և ամսական ու օրական շեղումների ճշտումները կատարելիս կարող է փոփոխել պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակում գործող արտադրողների (այսուհետ՝ ՊԷԱ կայան) էլեկտրական էներգիայի արտադրության կանխատեսվող ժամային գրաֆիկները երաշխավորված մատակարարի՝ էլեկտրական էներգիայի գնման համապատասխանաբար տարեկան, ամսական և օրական **ծախսերն ու շեղումները նվազագույնի հասցնելու նպատակով**՝ դրանք քննարկելով երաշխավորված մատակարարի և ՊԷԱ կայանների հետ: Երաշխավորված մատակարարը և ՊԷԱ կայանները պարտավոր են հետևել Համակարգի օպերատորի կողմից առաջարկված ԷԱՐԿ-ին,

ը) ԷՀՑ կանոնների 152.1-ին կետի համաձայն՝ Համակարգի օպերատորը երաշխավորված մատակարարի՝ իր սպառողների պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ **էլեկտրական էներգիայի գնման ծախսերը և ԷՄՇ կանոնների համաձայն առաջացող անհաշվեկշռույթները նվազագույնի հասցնելու նպատակով** ուղիղ պայմանագրերի շուկայի երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում երաշխավորված մատակարարի հետ պայմանագրեր կնքած ՊԷԱ կայաններին տալիս է կարգավարական կարգադրություններ, եթե առաջացել են ԷՀՑ կանոնների 84-րդ կետի համաձայն առաջարկված ԷԱՐԿ-ից շեղումներ: Նման դեպքում Համակարգի օպերատորը պետք է հաշվի առնի երաշխավորված մատակարարի կողմից ՊԷԱ կայանների և ՎԷԱ կայանների էլեկտրական էներգիա գնելու առաջնահերթ պարտավորությունը, բացառությամբ ԷՀՑ կանոնների 28.2-րդ գլխով նախատեսված դեպքի,

թ) ԷՄՇ կանոնների 40-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ Համակարգի օպերատորն Օրենքի, իր լիցենզիայի, ԷՄՇ կանոնների, ԷՀՑ կանոնների և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի պայմանագրի համաձայն հաշվեկշռման ծառայություն մատուցողի (այսուհետ՝ ՀԾՄ) կողմից **էլեկտրական էներգիայի գնման ծախսերը նվազագույնի հասցնելու**, ինչպես նաև առևտրային օրվա պահանջարկի և առաջարկի հաշվեկշռման նպատակով ՀԾՄ-ին տալիս է կարգավարման կարգադրություններ, այդ թվում՝ ՊԷԱ կայանից էլեկտրական էներգիայի գնման մասով,

ժ) ԷՄՇ կանոնների 96-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան հաշվեկշռի պլանավորումն ուղղված է **նվազագույն ծախսերով ներքին շուկայի պահանջարկի բավարարմանը**՝ ապահովելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշները, ինչպես նաև ԻԻՀ և Վրաստան միջհամակարգային փոխհոսքերի ժամային գրաֆիկները: Ուստի, էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան հաշվեկշռի փոփոխության ժամանակ, ի թիվս այլ պայմանների, պետք է հաշվի

առնվի նաև նվազագույն ծախսերով ներքին շուկայի պահանջարկի բավարարման սկզբունքը,

ժա) հարուցված վարչական վարույթի շրջանակում, հաշվի առնելով նաև Համակարգի օպերատորի որոշ դիտարկումները, Հանձաժողովը իրականացրել է 2026 թվականի ապրիլի 2-ից մինչև 15-ն ընկած ժամանակահատվածում Համակարգի օպերատորի կարգավարման հետևանքով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած լրացուցիչ ծախսերի հաշվարկների ճշգրտում, որոնց արդյունքներով՝

- 2026 թվականի ապրիլի 3-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 11:00-15:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 372 805 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և ԱՐՄՓԱՈՒԵՐ-ի կայանը միջինում 235.4 ՄՎտ հզորությամբ աշխատելու հանգամանքը, հնարավոր էր ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը չբեռնաթափել՝ որոշակի բեռնաթափելով ԱՐՄՓԱՈՒԵՐ-ի կայանը, որի արդյունքում ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 338 683 կՎտժ,
- 2026 թվականի ապրիլի 4-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 11:00-16:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 504 376 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը, ԱՐՄՓԱՈՒԵՐ-ի կայանը միջինում 241.4 ՄՎտ և ԵրՋԷԿ-ի կայանը միջինում 213 ՄՎտ հզորություններով աշխատելու հանգամանքը, հնարավոր էր ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը չբեռնաթափել՝ որոշակի բեռնաթափելով ԱՐՄՓԱՈՒԵՐ-ի և ԵրՋԷԿ-ի կայանները, որի արդյունքում ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 402 164 կՎտժ,
- 2026 թվականի ապրիլի 7-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 10:00-16:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 1194 918 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և էլեկտրահաղորդման գծերում տեղի ունեցող տեխնոլոգիական անխուսափելի կորուստները, հնարավոր էր ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափել ավելի պակաս, որի արդյունքում վերջիններս կարող էին լրացուցիչ առաքել 574 830 կՎտժ, իսկ ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 565 920 կՎտժ,

- 2026 թվականի ապրիլի 8-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 09:00-17:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 1 977 207 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և էլեկտրահաղորդման գծերում տեղի ունեցող տեխնոլոգիական անխուսափելի կորուստները, հնարավոր էր ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափել ավելի պակաս, որի արդյունքում վերջիններս կարող էին լրացուցիչ առաքել 1184175 կՎտժ, իսկ ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 1165 820 կՎտժ,
- 2026 թվականի ապրիլի 9-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 11:00-17:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 680 018 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և էլեկտրահաղորդման գծերում տեղի ունեցող տեխնոլոգիական անխուսափելի կորուստները, հնարավոր էր ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափել ավելի պակաս, որի արդյունքում վերջիններս կարող էին լրացուցիչ առաքել 616 235 կՎտժ, իսկ ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 606 684 կՎտժ,
- 2026 թվականի ապրիլի 12-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 10:00-16:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 943157 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով ժամը 13:00-16:00 ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և էլեկտրահաղորդման գծերում տեղի ունեցող տեխնոլոգիական անխուսափելի կորուստները, հնարավոր էր ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափել ավելի պակաս, որի արդյունքում վերջիններս կարող էին լրացուցիչ առաքել 407 721 կՎտժ, իսկ ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 401 401 կՎտժ,
- 2026 թվականի ապրիլի 13-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 10:00-16:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 637 698 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և էլեկտրահաղորդման գծերում տեղի ունեցող տեխնոլոգիական անխուսափելի կորուստները, հնարավոր էր ՎԷԱ կայանները և

Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափել ավելի պակաս, որի արդյունքում վերջիններս կարող էին լրացուցիչ առաքել 573762 կՎտժ, իսկ ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 564869 կՎտժ,

- 2026 թվականի ապրիլի 14-ին ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափվել են ժամը 09:00-17:00՝ իրենց դրվածքային (տեղեկայված) հզորության նկատմամբ պակաս առաքելով 1691668 կՎտժ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և էլեկտրահաղորդման գծերում տեղի ունեցող տեխնոլոգիական անխուսափելի կորուստները, հնարավոր էր ՎԷԱ կայանները և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը բեռնաթափել ավելի պակաս, որի արդյունքում վերջիններս կարող էին լրացուցիչ առաքել 1068378 կՎտժ, իսկ ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 1051818 կՎտժ,
- 2026 թվականի ապրիլի 11-ին ժամը 08:00-15:00 ընկած ժամանակահատվածում ԵրՋԷԿ-ը բեռնաթափվել է մինչև 175 ՄՎտ, մինչդեռ հաշվի առնելով տվյալ ժամերին ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի թերբեռնվածությունը և էլեկտրահաղորդման գծերում տեղի ունեցող տեխնոլոգիական անխոսափելի կորուստները, հնարավոր էր ԵրՋԷԿ-ը բեռնաթափել ավելի պակաս, որի արդյունքում վերջինս կարող էր լրացուցիչ առաքել 269985 կՎտժ, իսկ ԻԻՀ լրացուցիչ արտահանումը կկազմեր 265801 կՎտժ:

Արդյունքում, 2026 թվականի ապրիլի 2-ից մինչև 15-ն ընկած ժամանակահատվածում Համակարգի օպերատորը, չօգտագործելով ԻԻՀ-ի հետ միջպետական էլեկտրահաղորդման գծերի հնարավոր առավելագույն թողունակությունը, ՎԷԱ կայանները, Միադրույք սակագնով ՊԷԱ կայանը և ԵրՋԷԿ-ը բեռնաթափել է ավելի շատ, քան անհրաժեշտ էր, որի հետևանքով ԻԻՀ պակաս է առաքվել 5363160 կՎտժ էլեկտրական էներգիա և դրա դիմաց ԻԻՀ-ի հետ իրականացվող «գազ-էլեկտրական էներգիայի դիմաց» գործարքի շրջանակում չի ներկրվել 1650203 խորանարդ մետր բնական գազ: Նշված քանակից հանելով գազափոխադրման համակարգի կորուստները և ԵրՋԷԿ-ը 2026 թվականի ապրիլի 11-ին ժամը 08:00-15:00 չբեռնաթափելու արդյունքում լրացուցիչ առաքվող էլեկտրական էներգիայի համար անհրաժեշտ բնական գազի ծախսը՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունից ավել ձեռքբերված բնական գազը կազմել է 1553202 խորանարդ մետր՝ 129.77 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) արժեքով, որը կարող էր չառաջանալ՝ ձևավորելով նույն չափ լրացուցիչ օգուտ: Միևնույն ժամանակ, ԻԻՀ

լրացուցիչ էլեկտրական էներգիա արտահանելու և դրա դիմաց ԻԻՀ-ից լրացուցիչ բնական գազ ներկրելու պարագայում բնական գազի փոխադրման, էլեկտրական էներգիայի հաղորդման, Համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների գծով լրացուցիչ ծախսը կկազմեր 29.65 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ ՎԷԱ կայանները հնարավոր չբեռնաթափման արդյունքում լրացուցիչ առաքվող էլեկտրական էներգիայի դիմաց վճարվող և բեռնաթափման համակարգային ծառայության դիմաց համապատասխան ժամերի համար փաստացի ձևավորված գումարների տարբերության արդյունքում լրացուցիչ ծախսը՝ 7.63 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի): **Այսպիսով, Համակարգի օպերատորի կողմից խախտվել են ԷՀՑ կանոնների 82-րդ, 84-րդ, 152.1-ին կետերով, ԷՄՇ կանոնների 40-րդ կետի 7-րդ և 96-րդ կետի 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, որի հետևանքով ԻԻՀ 5 363 160 կՎտժ էլեկտրական էներգիա պակաս արտահանելու և դրա դիմաց ԻԻՀ-ից 1 650 203 խորանարդ մետր բնական գազ պակաս ներկրելու արդյունքում ջերմային էլեկտրակայանների գազի պահանջարկի բավարարման համար «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունից ավել է ձեռք բերվել 1 553 202 խորանարդ մետր բնական գազ՝ 129.77 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) արժեքով, որից էլ հանելով ՎԷԱ կայանների հնարավոր չբեռնաթափման դեպքում և լրացուցիչ արտահանվող էլեկտրական էներգիայի, լրացուցիչ ներկրվող բնական գազի քանակներին համապատասխան առաջանալիք լրացուցիչ ծախսերը, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած լրացուցիչ ծախսը կազմել է 92.49 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի (129.77-29.65-7.63):**

Ինչ վերաբերում է վարչական վարույթի շրջանակում Համակարգի օպերատորի ներկայացրած պարզաբանումներին, ապա դրանք բավարար չեն ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների փոփոխությունների հետևանքով համակարգում առաջացած լրացուցիչ ծախսերի հիմնավորման տեսանկյունից, այլ միայն որոշ նկատառումների արդյունքում ընդամենը անհրաժեշտություն է առաջացել ճշգրտել Հանձնաժողովի կողմից նախապես կատարված հաշվարկները, մասնավորապես՝

- էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների փոփոխության համար Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի հայտարարության և ընդհանուր աշխարհաքաղաքական իրավիճակի վրա հիմնվելը բավարար չէ, քանի որ առկա չեն բավարար փաստական հիմքեր, ստեղծված իրավիճակում նման հայտարարություններն ինքնին չեն կարող վկայել գործողությունների իրականացման իրական հավանականության մասին, իսկ նման հարցերը անհրաժեշտ էր քննարկել ՀՀ իրավասու պետական մարմինների հետ և ունենալ վերջիններիս հստակ ցուցումները,

հակառակ մեկնաբանման պարագայում ցանկացած հայտարարություն պետք է ուղղակիորեն հանգեցնի էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների փոփոխությունների,

- չի ներկայացվել ապացույցներ 2026 թվականի մայիսի 4-ին ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած վթարային իրավիճակի առաջացման պատճառներն անմիջականորեն ԻԻՀ էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած վթարների հետ կապված լինելու վերաբերյալ, ինչպես նաև չի հիմնավորվել նշված վթարային իրավիճակի կապը (այն որպես օրինակ ներկայացնելը) 2026 թվականի ապրիլի 2-ից մինչև 15-ն ընկած ժամանակահատվածում դեպի ԻԻՀ էլեկտրական էներգիայի արտահանման ծավալների նախապես սահմանափակման հետ, մասնավորապես՝ նման ռիսկերի առաջացման դեպքում այն կարող էր կարգավորվել էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների բեռնաթափման միջոցով, քանի որ խնդրահարույց ժամերին ՎԷԱ կայանների և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանի բեռնաթափման ժամերին հիմնականում ԱՐՄՓԱՈՒԵՐ-ը և առանձին դեպքերում ԵրՋԷԿ-ը աշխատել են հնարավոր առավելագույն հզորությամբ և անհրաժեշտության դեպքում կարող էին բեռնաթափվել այդ կայանները, ինչպես նաև 2026 թվականի մայիսի 4-ին առաջացած խնդիրը հնարավոր է եղել կարգավորել դեպի ԻԻՀ էլեկտրական էներգիայի արտահանման առավելագույն ծավալների պարագայում (նախապես ԻԻՀ էլեկտրական էներգիայի արտահանումը սահմանափակված չի եղել),
- վթարային իրավիճակների վերաբերյալ նախապես հստակ տեղեկատվության առկայության անհնարինությունը և Համակարգի օպերատորի կողմից մշտապես հնարավոր ռիսկերի առաջացմանը պատրաստ լինելը և կանխարգելիչ, լրացուցիչ նախազգուշական միջոցառումներ կիրառելը որպես պարզաբանում ներկայացնելը նույնպես բավարար հիմնավորված չէ, քանի որ նույն տրամաբանությամբ Համակարգի օպերատորը կարող է առանց համապատասխան գնահատականների և հստակ հիմնավորումների էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավարումը մշտապես իրականացնել բոլոր ռիսկերի չեզոքացման նպատակադրումից՝ առանց հաշվի առնելու սպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարումը նվազագույն ծախսումներով իրականացնելու սկզբունքը, ինչը հակասում է ԷՄՇ կանոններով և ԷՀՑ կանոններով ամրագրված մոտեցումներին,
- էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների փոփոխության համար Համակարգի օպերատորի կողմից նշվել է նաև ԷՀՑ կանոնների 92-րդ կետով, 157-րդ կետի 3-րդ, 7-րդ,

8-րդ, 13-րդ ենթակետերով ամրագրված իրավասությունները, մինչդեռ հստակ չի հիմնավորվել, որ ստեղծված իրավիճակում նշված կետերի հիման վրա գործողությունների իրականացման ժամանակ հաշվի է առնվել նաև ԷՄՇ կանոններով և ԷՀՑ կանոններով ամրագրված՝ սպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարումը հնարավորինս նվազագույն ծախսումներով իրականացնելու սկզբունքը, ավելին՝ ոչ միայն չի հիմնավորվել, որ հաշվի է առնվել, այլև արված վերլուծությունները վկայում են հակառակի մասին,

- ԷՀՑ կանոնների 94-րդ կետի 7-րդ ենթակետի հիման վրա ստեղծված աշխարհաքաղաքական լարված իրավիճակը հիմք ընդունելը՝ առանց ՀՀ իրավասու պետական մարմինների հետ այն քննարկելու և վերջիններից հստակ տեղեկատվություն ունենալու, նույնպես բավարար հիմնավորված չէ,
- Հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 8-ի №ՄՄ/34.3-Ղ4-1/2433-2026 գրությամբ ներկայացված հաշվարկները ԷՄՇ կանոնների 117.1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվարկման մեթոդով իրականացնելու մասով հարկ է նշել, որ նշված մեթոդը կիրառվում է բեռնաթափման համակարգային ծառայության քանակի որոշման համար և հիմնված է նախորդ տարիներին համապատասխան ժամերին առաքված էլեկտրական էներգիայի միջինացված տվյալների վրա, իսկ 2026 թվականի ապրիլի 2-ից մինչև 15-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած լրացուցիչ ծախսը հաշվարկվել է որպես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից ավել գազ ձեռք բերելու հետևանքով կատարված ծախս՝ պայմանավորված ՎԷԱ կայանների և Միադրույք սակագնով ՊԷԱ կայանի ավելի շատ բեռնաթափման, ԻԻՀ լրացուցիչ էլեկտրական էներգիա չարտահանելու և դրա դիմաց լրացուցիչ գազ չներկրելու հետ: Այնուամենայնիվ, Համակարգի օպերատորի դիտարկումն ընդունելի է ԷՄՇ կանոնների 117.1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվարկման մեթոդը ճշգրտված հաշվարկում որպես համապատասխան ժամերին ՎԷԱ կայանների հաշվարկներով նախատեսված չափերով չբեռնաթափելու արդյունքում վերջիններին լրացուցիչ առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարվող գումարի և տվյալ ժամերին փաստացի ձևավորված բեռնաթափման համակարգային ծառայության արժեքի տարբերության մասով առաջացող լրացուցիչ ծախս հաշվի առնելու տեսանկյունից,
- գիշերային ժամերին ԻԻՀ արտահանվող էլեկտրական էներգիայի դիմաց կիրառվող նվազագույն գործակցի կիրառմամբ պայմանավորված ԻԻՀ էլեկտրական էներգիայի արտահանման փոքր ծավալների և ջերմային էլեկտրակայանների բեռնաթափման

մասով Համակարգի օպերատորի դիտարկումն ընդունելի է և ճշգրտված հաշվարկներում թողնվել է միայն 2026 թվականի ապրիլի 11-ին ժամը 08:00-15:00 ընկած ժամանակահատվածը,

- էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության սահմանված ցուցանիշներն ապահովելու և ստեղծված ռիսկային իրավիճակում անհրաժեշտ բոլոր օպերատիվ ու կարգավարական միջոցառումներն իրականացնելու նպատակով Համակարգի օպերատորի գործողություններում հաշվի չեն առնվել ԷՄՇ կանոններով և ԷՀՑ կանոններով ամրագրված՝ սպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարումը նվազագույն ծախսումներով իրականացնելու սկզբունքը,

ժբ) Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից Օրենքի դրույթները, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է կիրառելու Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները,

ժգ) Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, Օրենքով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է նախազգուշացում,

ժդ) Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կայանի կառուցման ժամանակահատվածում էլեկտրական (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կամ ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի, էլեկտրաէներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձի, էլեկտրաէներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձի (բացառությամբ՝ էլեկտրաէներգիայի երաշխավորված մատակարարի), գազամատակարարման համակարգի օպերատորի, էլեկտրական էներգիայի (հզորության) կամ ջերմային էներգիայի հաղորդման կամ բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձի, մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող կայաններում էլեկտրական էներգիա արտադրող լիցենզավորված անձի կողմից Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելն առաջացնում է նախազգուշացում,

ժե) Օրենքի 42-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից կարգավորող հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտի պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում Օրենքի 42-րդ հոդվածի այլ մասերով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշներ, առաջացնում է նախազգուշացում,

ժզ) Օրենքի 42-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից Օրենքի 42-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը, առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից մեկուկես միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում,

ժէ) Համակարգի օպերատորի կողմից ներկայացված պատճառաբանությունները հիմնավորված չեն, չեն բխում գործող իրավակարգավորումներից և չեն կարող հիմք հանդիսանալ պատասխանատվությունից ազատվելու համար, ինչպես նաև վարչական վարույթի շրջանակներում հաստատվել է Համակարգի օպերատորի կողմից իրավախախտումը կատարած լինելու հանգամանքը և դրա հետևանքով խախտվել են մի խումբ սպառողների իրավունքներն ու օրինական շահերը՝ վերջիններիս համար առաջացնելով 92.49 միլիոն դրամի (առանց ավելացված արժեքի հարկի) լրացուցիչ ծախս, Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ խախտման համար որպես համաչափ պատասխանատվության միջոց անհրաժեշտ է կիրառել 1 500 000 դրամ գումարի չափով տուգանք,

ժը) Հանձնաժողովի կողմից դիտարկված ժամանակահատվածում էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած լրացուցիչ ծախսը էական է սպառողի վրա ազդեցության տեսանկյունից և այն տեղի է ունեցել Համակարգի օպերատորի ոչ իրավաչափ գործունեության հետևանքով Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի իրավասությունը՝ այն է վերականգնելու մինչև

խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն)՝ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած 92.49 միլիոն դրամի (առանց ավելացված արժեքի հարկի) լրացուցիչ ծախսի ազդեցությունը սպառողների համար չեզոքացնելու նպատակով այն նվազեցնել Համակարգի օպերատորի կողմից մատուցվող էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության սակագնի հաշվարկից, ևհիմք ընդունելով Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԷՀՑ կանոնների 82-րդ, 84-րդ, 152.1-ին կետերով, ԷՄՇ կանոնների 40-րդ կետի 7-րդ և 96-րդ կետի 2-րդ ենթակետերով սահմանված պահանջների խախտման՝
   1) համար Համակարգի օպերատորին տուգանել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով,
   2) արդյունքում էլեկտրաէներգետիկական համակարգում ձևավորված 92.49 միլիոն դրամի (առանց ավելացված արժեքի հարկի) լրացուցիչ ծախսը նվազեցնել Համակարգի օպերատորի կողմից մատուցվող էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության սակագնի հաշվարկից:
2. Համակարգի օպերատորին պարտավորեցնել՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել ՀՀ պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Համակարգի օպերատորին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
__ _____ի 2026թ.